

## «Ֆինանսների նախարարություն»

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/2

5 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Նար-Շին» ՍՊԸ 12.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի 17.07.2014 թ-ի թիվ 1425919 վարչական ակտի դեմ:

Նախ նշվեց, որ սույն գանգատը քննության է առնվել ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 28.10.2014 թ-ի նիստում: Արդյունքում ընդունվել է թիվ 25/1 որոշումը, որով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են ստացվել «Նար-Շին» ՍՊԸ նկատմամբ ՀՀ ՖՆ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի կողմից 17.07.2014 թ-ին ընդունված թիվ 1425919 վարչական ակտի վերաբերյալ, «Նար-Շին» ՍՊԸ 12.09.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է, հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթները:

Հիմք ընդունելով «Նար-Շին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի թիվ 04/13-1/803994-15 գրությամբ ստացված նյութերը Հանձնաժողովը վերսկսում է իր 28.10.2014 թ-ի թիվ 25/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը՝ գանգատի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի կողմից 17.07.2014 թ-ի կայացված թիվ 1425919 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է, որ ս.թ. հուլիսի 1-ին Վանաձոր-Ալավերդի մայրուղու վրա իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Կռագ» մակնիշի 34 DS 055 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Աշոտ Գևորգյանը առանց ուղեկցող փաստաթղթերի Կոտայքի մարզի Արամուս գյուղում գտնվող «Նար-Շին» ՍՊԸ-ի հանքավայրից Լոռու մարզի Դսեղ գյուղի քարի արտադրամաս էր տեղափոխում 6 մ<sup>3</sup> բազալտե գլխ՝ ընդհանուր 150.000 դրամ արժողությամբ: Տեղափոխվող ապրանքի գինն ընդունվել է երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքների իրացման գներին համապատասխան: Արդյունքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 4-ով սահմանված «ՀՀ-ում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման և գրանցման (հաշվառման) կարգ»-ի դրույթները խախտելու համար վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 75.000 դրամ:

Ըստ «Նար-Շին» ՍՊԸ-ի գանգատի, ընկերությունը 13.07.2013 թ-ին դիմում է ներկայացրել Կոտայքի ՏՀՏ՝ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ և մինչ օրս գործունեություն չի իրականացնում: Հետևապես վարչական ակտում հիշատակված դեպքի հետ ընկերությունը որևէ առնչություն չունի:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործում առկա են ապացույցներ այն մասին, որոնք ըստ էության հիմնավորում են վարչական ակտով արձանագրված խախտումն ընկերության կողմից կատարված լինելու հանգամանքը: Մասնավորապես, Լոռու մարզի, Դսեղ գյուղի հարևանությամբ գործող քարի վերամշակման արտադրամասի (որտեղ տեղափոխվել է 6 մ<sup>3</sup> բազալտի քարը) պետ Սուրեն

Դալլաքյանը, արտադրամասի բանվոր Ա.Թումանյանը, ինչպես նաև «Կոագ» մակնիշի 34 DS 055 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Աշոտ Գևորգյանը տվել են գրավոր հայտարարություններ այն մասին, որ վարչական ակտում նշված բազալտե քարերը ձեռք են բերվել «Նար-Շին» ՍՊԸ-ից:

Այսպես, վարչական ակտում հիշատակված «Կոագ» մակնիշի 34 DS 055 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ Աշոտ Գևորգյանը ՀՀ ՖՆ ՕՀՎ 27-րդ բաժնի ավագ օ/լ Հ.Հանիսյանին տված բացատրությունում մասնավորապես նշել է, որ հուլիսի 1-ին Կոտայքի մարզի Արամուս գյուղում գտնվող հանքից 6 մ<sup>3</sup> բազալտի քարը, որը տեղափոխել է Լոռու մարզի Դսեղ գյուղում գտնվող քարի արտադրամաս, տեղափոխել է առանց համապատասխան փաստաթղթի: Աշոտ Գևորգյանին ուղղված հարցին, թե ինչի համար տեղափոխվող քարի համար նա փաստաթուղթ չի ունեցել, բացատրությունում Աշոտ Գևորգյանը նշել է, որ Արամուս գյուղում գտնվող հանքի ներկայիս տերը՝ Նարեկը, որն իր իմանալով հանդիսանում է «Նար-Շին» ՍՊԸ-ի տնօրենը, փաստաթուղթ չի տվել:

Իր հերթին, Լոռու մարզի, Դսեղ գյուղի հարևանությամբ գործող քարի վերամշակման արտադրամասի պետ Սուրեն Դալլաքյանն իր 16.07.2014 թ-ի գրավոր հայտարարությունում մասնավորապես նշել է, որ 6 մ<sup>3</sup> քարի ձեռք բերման համար Նարեկի հետ պայմանավորվել է հեռախոսով, որի համարն է 055438480: Սուրեն Դալլաքյանը նշել է նաև, որ 2014 թ-ի հուլիսի 1-ին Աշոտը (վարորդը) առավոտյան բերել է բարձրված 6 մ<sup>3</sup> քարը, որը, սակայն, Վանաձորի ճանապարհի տարածքում կատարված ստուգմամբ պարզվել է, որ տեղափոխվում է առանց փաստաթղթի:

Քննարկվող դեպքում հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Սուրեն Դալլաքյանի 16.07.2014 թ-ի հայտարարությունում նշված Նարեկի (ումից որ Սուրեն Դալլաքյանը ձեռք է բերել 6 մ<sup>3</sup> քարը) բջջային հեռախոսահամարը և «Նար-Շին» ՍՊԸ տնօրեն Նարեկ Ղազանչյանի 12.09.2014 թ-ի գանգատի վրա նշված բջջային հեռախոսահամարը նույնն են: Նշված հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ վարչական ակտում նշված 6 մ<sup>3</sup> քարը տեղափոխվել է «Նար-Շին» ՍՊԸ-ի հանքավայրից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ վարչական ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 28.10.2014 թ-ի թիվ 25/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. ՀՀ ՖՆ ՕՀՎ 27-րդ բաժնի պետի 17.07.2014 թ-ի թիվ 1425919 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

